

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության  
միջև

համաձայնության, բարեկամության և համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի  
Հանրապետությունը,

հաշվի առնելով Երկու ժողովուրդների միջև պատմության  
ընթացքում հաստատված առանձնահատուկ ավանդական  
բարեկամական հարաբերությունները և բազմաբնույթ կապերը,

ցանկանալով անրապնդել իրենց կապերը հազարամյակների  
խորքից Եկող բարեկամության ոգով և զարգացնել  
համագործակցությունը բոլոր բնագավառներում,

Վերահստատելով իրենց հավատարնությունը միջազգային  
իրավունքից բխող պարտավորություններին, մասնավորապես,  
Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությանը,

գիտակցելով այն պարտավորությունների կարևորությունը, որ  
իրենք ստանձնել են՝ ստորագրելով Հելսինկիի Եզրափակիչ ակտը և  
Փարիզի խարտիան Նոր Եվրոպայի համար, ինչպես նաև ԵԱՀԿ  
շրջանակներում այլ փաստաթղթերը, և ցանկանալով ստեղծել  
անվտանգության և համագործակցության մեխանիզմներ ողջ  
Եվրոպական մայրցանաքում,

ցանկանալով նպաստել միացյալ Եվրոպայի կայունությանն ու  
զարգացմանը, հաշվի առնելով Եվրոպական միության կառուցման  
հեռանկարները և խաղաղ ու համերաշխ Եվրոպայի կառուցման գործում  
նրա ներդրությունը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Իրենց Երկկողմ հարաբերություններում Հայաստանի  
Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը գործում են  
որպես ինքնիշխան և իրավահավասար պետություններ՝  
բարեկամության և փոխադարձ վստահության ոգով սերտորեն  
համագործակցելով բոլոր բնագավառներում:

Երկու Կողմերը, ըստ անհրաժեշտության, կկնքեն այլ  
համաձայնագրեր և ձեռք կբերեն պայմանավորվածություններ՝ սույն  
Պայմանագրի դրույթներն իրագործելու նպատակով:

## Հոդված 2

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը, ընդունելով ազատության և ժողովրդավարության համընդիանուր արժեքները, համագործակցում են մարդու իրավունքների և իշխանական ազատությունների պաշտպանության և խթանման բնագավառում, մասնավորապես, համապատասխան միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

Նրանք միավորում են իրենց ջանքերը միջազգային անվտանգությանը նպաստելու, հակամարտությունները կանխելու և պետությունների հարաբերություններում միջազգային իրավունքի նորմերը հարգելու նպատակով:

## Հոդված 3

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը կանոնավոր խորհրդակցություններ են անցկացնում համապատասխան մակարդակներով երկկողմ հարաբերությունների, ինչպես նաև ընդիհանուր հետաքրքրություն ներկայացնող միջազգային խնդիրների, Եվրոպայում անվտանգության և համագործակցության վերաբերյալ՝ տեսակետներ փոխանակելու նպատակով:

Այդ բնագավառներում Կողմերը ձգտում են հնարավորին չափ ներդաշնակեցնել իրենց դիրքորոշումները և, ըստ անհրաժեշտության, վարում են համատեղ կամ համաձայնեցված քաղաքականություն:

Այդ նպատակով Կողմերի միջև ամենաբարձր մակարդակի հանդիպումներ տեղի կունենան՝ ըստ համաձայնության, ընդ որում արտաքին գործերի նախարարների միջև՝ առնվազն տարին մեկ անգամ: Նախարարությունների ստորաբաժանումների միջև կհաստատվի սերտ համագործակցություն:

Երկու պետությունների կառավարությունների մյուս անդամները կիանողիան, ըստ անհրաժեշտության, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու համար:

## Հոդված 4

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը խորհրդակցություններ կանցկացնեն այն միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների

շրջանակներում, որոնց անդամակցում են, մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպությունում՝ անհրաժեշտության դեպքում իրենց դիրքորոշումները հնարավորին չափ ներդաշնակեցնելու և այդ շրջանակներում ընդունված որոշումները առավելագույն արդյունավետությամբ իրագործելու նպատակով:

## Հոդված 5

Հունաստանի Հանրապետությունը պարտավորվում է աջակցել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև կապերի զարգացմանը:

Հայաստանի Հանրապետության հետ ստորագրված երկկողմ Համաձայնագրերում Հունաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններով հարգվում են Եվրոպական միության հիմնարար պայմանագրերը և դրանցից բխող իրավական նորմերը:

## Հոդված 6

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը սերտորեն համագործակցում են Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության շրջանակներում:

Կողմերը համաձայնեցված գործունեություն են ծավալում պետական կառույցների ամրապնդման նպատակով, մասնավորապես, իրավական ոլորտում, որպեսզի նպաստեն կայունությանը, անվտանգությանը և իրավական պետության ստեղծմանը Եվրոպական մայրցամաքում:

Նրանք աջակցում են, մասնավորապես, այն նորմերի ընդունմանը, որոնք նպաստում են հակամարտությունների կանխմանը:

Կողմերը համագործակցում են՝ միմյանց միջև, ինչպես նաև այլ շահագրգիռ երկրների հետ Եվրոպայի անվտանգության պայմանագիր կնքելու նպատակով:

Հունաստանի Հանրապետությունը ընդգծում է Եվրոպական միության կառուցման կարևորությունը, որը, իրագործելով ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն, թույլ կտա ամրապնդել համագործակցությունը Եվրոպայի պետությունների միջև և կարևորագույն ներդրում կունենա Եվրոպական մայրցամաքի և ամբողջ աշխարհի կայունության գործում:

## Հոդված 7

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը, ընդգծելով զինաթափման համաձայնագրերի վճռական դերը Եվրոպայի և միջազգային անվտանգության գործում, Եվրոպայում անվտանգության և համագործակցության շրջանակներում սատար են կանգնում զինաթափման գործընթացին, վստահության և անվտանգության ամրապնդմանը և հակամարտությունների կանխմանը Անվտանգության համաժողովի շրջանակներում:

Կողմերն առանձնահատուկ կարևորություն են տալիս զանգվածային ռչնչացնան գենքերի չտարածմանն ուղղված միջոցառումներին և այդ նպատակով համաձայնեցված գործունեություն են ծավալում միջազգային ատյաններում:

### Հոդված 8

Հաշվի առնելով Եվրոպայի անվտանգության հարցերում տեղի ունեցած հիմնական փոփոխությունները և, մասնավորաբես, առձակատնան իրողության ավարտը, Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը զարգացնում և խորացնում են իրենց կապերը ռազմական ասպարեզում՝ պարբերաբար տեսակետներ փոխանակելով պաշտպանության իրենց հիմնադրույթների վերաբերյալ:

Այդ նպատակով նրանք խորախուսում են արտաքին գործերի և պաշտպանության նախարարությունների, ինչպես նաև երկու պետությունների բանակների գլխավոր շտաբների միջև կապերը:

### Հոդված 9

Այն դեպքում, եթե Կողմերից մեկի կարծիքով ծագում է խաղաղությանը սպառնացող կամ նրա անվտանգության հիմնական շահերը հարցականի տակ դնող իրավիճակ, տվյալ Կողմը կարող է դիմել մյուս Կողմին, որ այդ խնդրի շուրջ անհապաղ խորհրդակցություններ անցկացվեն: Նրանք կձգտեն որդեգրել մի ընդհանուր դիրքորոշում և կգործեն միջազգային ատյաններում՝ այդ իրավիճակին դիմակայելու համար:

### Հոդված 10

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը նպաստում են երկու պետությունների խորհրդարանների և պատգամավորների միջև համագործակցությանը և փորձի փոխանակմանը:

## Հոդված 11

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը զարգացնում են համագործակցությունը ժողովրդավարական կառույցների և իրավական պետության կայացման ոլորտներում:

## Հոդված 12

1. Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը զարգացնում են իրենց տնտեսական համագործակցությունը՝ իրենց իրավասության շրջանակներում ստեղծելով բարենպաստ մթնոլորտ համապատասխան համաձայնագրեր կնքելու համար:

2. Յուրաքանչյուր Կողմ կծոտի բարելավել մյուս Կողմի ձեռնարկությունների գործունեության պայմաններն իր տարածքում: Կողմերը խորհրդական են անմիջական ներդրումները, համատեղ ձեռնարկությունների ստեղծումը, «նոու-հաու»-ների փոխանակումը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական բնագավառի մասնագետների պատրաստումը:

3. Կողմերը սերտ համագործակցություն են զարգացնում այն բնագավառներում, որոնք առանձնահատուկ կարևորություն ունեն իրենց ապագայի համար, մասնավորապես, հետևյալ ոլորտներում.

տնտեսության վերակառուցում և կառավարում,  
շինարարություն,  
հաղորդակցություն և տեղեկությունների փոխանակում,  
տրանսպորտ և օդային հաղորդակցություն,  
էներգետիկա,  
գյուղատնտեսության և սննդի արդյունաբերություն,  
ռեսուրսների շահագործում,  
շրջակա միջավայրի պաշտպանություն,  
սեյսմիկ պաշտպանություն,  
գրոսաշրջություն,  
առողջապահություն,  
բանկային և ֆինանսական ծառայություններ և  
ապահովագրություն,  
ապրանքաշրջանառություն և բաշխում:

4. Հաշվի առնելով իրենց փոխադարձ շահերը և կապի մեջ լինելով Եվրոպական միության մյուս երկրների հետ՝ Կողմերը կհամագործակցեն միջազգային տնտեսական և ֆինանսական հաստատությունների, մասնավորապես, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի,

Համաշխարհային բանկի և Միջազգային դրամական ֆոնդի շրջանակներում:

### Հոդված 13

1. Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը, ցանկանալով զարգացնել հարաբերություններն իրենց ժողովուրդների միջև և նպաստել եվրոպական մայրցամաքի բոլոր ժողովուրդների համար բաց մշակութային տարածքի ստեղծմանը, ամրապնդում են իրենց համագործակցությունը գիտության, տեխնիկայի, կրթության և մշակույթի բնագավառներում՝ առանձնահատուկ կարևորություն տալով կադրերի պատրաստմանը, նաև ավորապես, տնտեսական և վարչական կառավարման բնագավառներում, ինչպես նաև փոխանակումներին և համատեղ գործողություններին:

2. Կողմերն աջակցում են գիտահետազոտական հիմնարկների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև ուղղակի կապերի զարգացմանը՝ խրախուսելով համատեղ գիտական նախագծերի մշակումը:

3. Կողմերն աջակցում են հունարենի ուսուցմանը Հայաստանում և հայոց լեզվի ուսուցմանը Հունաստանում:

4. Հայաստանի և Հունաստանի ժողովուրդների՝ միջանց ավելի լավ ճանաչելու նպատակով Կողմերն օժանդակում են փոխանակումների զարգացմանը մշակույթի և գեղարվեստի բնագավառներում: Նրանք նպաստում են համագործակցության զարգացմանը զանգվածային լրատվության ասպարեզում, ինչպես նաև մյուս Կողմի գրականության և մամուլի տարածմանը: Կողմերը նպաստում են միմյանց մշակութային կենտրոնների ստեղծմանը:

5. Կողմերը, ցանկանալով միջանց միջև հաստատել հավասարակշռված և իրենց պետությունների շահերին համապատասխանող համագործակցություն, համաձայնում են պարբերաբար մշակել փոխանակումների համատեղ ծրագրեր մշակույթի, կրթության և տեխնիկայի ասպարեզներում:

### Հոդված 14

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում Հայաստանյաց առաքելական եկեղեցու և Հույն ուղղափառ եկեղեցու միջև, ինչպես նաև այլ կրոնական համայնքների միջև համագործակցության, հոգևոր արժեքների զարգացման համար:

## Հոդված 15

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը խրախուսում են կապերը Երկու Երկրների քաղաքացիների, մասնավորապես, հայ և հույն Երիտասարդների միջև:

Այդ նպատակով նրանք նպաստում են հատկապես դպրոցների, լիցեյների, բարձրագույն ուսումնական հաստատությունների ու գիտահետազոտական ինստիտուտների միջև ուղիղ համագործակցությանը՝ աշակերտների, ուսուցիչների և դասախոսների, գիտաշխատողների փոխանակման ձանապարհով:

## Հոդված 16

Կողմերն աջակցում են Երկու Երկրների քաղաքական, հասարակական և արհմիութենական կազմակերպությունների միջև համագործակցությանը:

## Հոդված 17

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը խրախուսում են իրենց տեղական վարչական մարմինների միջև համագործակցությունը:

## Հոդված 18

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը կը նդայնեն իրենց համագործակցությունը հյուպատոսական ծառայությունների բնագավառում:

Կողմերը համապատասխան պայմաններ կստեղծեն դյուրացնելու համար Երկու Երկրների քաղաքացիների տեղաշարժը:

## Հոդված 19

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը կնպաստեն համապատասխան հաստատությունների միջև փոխօգնության բնագավառում:

Կողմերը կկազմակերպեն համագործակցություն, մասնավորապես, Ինտերպոլի շրջանակներում, հանրային անվտանգությունն ապահովող

մարմինների միջև, հատկապես ոստիկանությունների միջև կազմակերպված հանցավորության, թմրադեղերի, անթույլատրելի առևտություն, մաքսանենգության, ինչպես նաև արվեստի գործերի անօրինական առևտություն դեմ պաքարի համար: Նրանք համապատասխան համագործակցություն կակտեն միջազգային ահաբեկչության դեմ պայքարի բնագավառում:

### Հոդված 20

Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը երաշխավորում են անհրաժեշտ պայմանների ստեղծում և համապատասխան միջոցառումների իրագործում՝ Հունաստանի Հանրապետությունում բնակվող ազգությամբ հայ և Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգությամբ հույն քաղաքացիների էթնիկական, մշակութային և կրոնական ինքնության պահպանման և զարգացման համար՝ միջազգային նորմերին համապատասխան:

Կողմերը պետական մակարդակով աջակցում են հունահայ համայնքի և հայաստանաբնակ հունական համայնքի հասարակական, հոգևոր, մշակութային, կրթական, մարզական և բարեգործական գործունեությանը:

### Հոդված 21

Սույն Պայմանագրի դրույթները ոչ մի կերպ չեն ազդում երրորդ պետությունների նկատմամբ Կողմերի ստանձնած պարտավորությունների վրա և ուղղված չեն որևէ երրորդ պետության դեմ:

### Հոդված 22

1. Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ կմտնի վավերագրերը փոխանակելու պահից:

2. Սույն Պայմանագիրը կնքվում է 10 տարի ժամկետով: Նրա գործողությունը ինքնաբերաբար կերկարածզվի յուրաքանչյուր հինգ տարին մեկ, եթե Կողմերից մեկը մյուս Կողմին ընթացիկ ժամկետի ավարտից մեկ տարի առաջ գրավոր չտեղեկացնի Պայմանագիրը չեղյալ հայտարարելու վերաբերյալ իր որոշման մասին:

### Հոդված 23

Սույն Պայմանագիրը գրանցվելու է ՄԱԿ-ի քարտուղարությունում՝ համաձայն Միավորված ազերի կազմակերպության Կանոնադրության 102-րդ հոդվածի:

Կատարված է Աթենք քաղաքում 1996 թվականի հունիսի 17-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, հունարեն և ֆրանսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարագոր են:

Տարածայնության դեպքում գերակայությունը տրվում է ֆրանսերեն տեքստին:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 1999 թ Վականի. մայիսի 12-ից: